Արձանագրություն N 2

“ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/22» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

02.11.2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ալավերդյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բաբայան, Վ. Դեմիրչյան, Ս.Շահբազյան, Ա.Գասպարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ- ԳՀԱՊՁԲ-17/22» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա.Ալավերդյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ **2017 թվականի նոյեմբերի 2-ին, ժամը 10:00-ին,** Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտիի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

2. “ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/22» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա.Ալավերդյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ
2	«ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ
3	«Լիմուշ» ՍՊԸ
4	«Սմարթլայն» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա.Ալավերդյան)

3.1 Գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

	Գնման առարկան	Թուղթ տպիչների համար			
Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գները		
			Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
1	«ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ	1500000	1125000	225000	1350000
2	«ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ		1160833.3	232166.7	1393000
3	«Լիմուշ» ՍՊԸ		1333333.3	266666.7	1600000
4	«Սմարթլայն» ՍՊԸ		1166666.7	233333.3	1400000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա.Ալավերդյան)

4.1 «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ-ի, «Լիմուշ» ՍՊԸ-ի և «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին: «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման մեջ (Հավելված 10) տուժանքի մասին համաձայնագրում նշված բանկային հաշվեհամարը չի համապատասխանում վճարման պահանջագրում նշված հաշվեհամարին, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ հանձնաժողովը մերժեց «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ-ի հայտը, որպես հրավերի պահանջներին անհամապատասխան:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ	Բավարար
«ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ	Անբավարար
«Լիմուշ» ՍՊԸ	Բավարար
«Սմարթլայն» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Ա.Ալավերդյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/22» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ–ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցելու մասին

(Ա.Ալավերդյան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ **03.11.2017թ.** հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա.Ալավերդյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված հարցման ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, բայց ոչ ուշ քան 8.11.2017թ. ժամը 11:00-ին Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա.Ալավերդյան
Անդամներ՝		Ա. Բաբայան
		Վ. Դեմիրչյան
		Ս. Շահբազյան
		Ա.Գասպարյան
Համակարգող՝		Ի. Եղիազարյան